

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Դավիթը մի բառ մտապահեց, բաժանեց այն գումարելիների և թղթի վրա գրեց դրանց գումարը: Ո՞ր բառն էր մտապահել Դավիթը:

ուսումնական պարապմունք դպրոցում + «վրա»-ի հակառակը

Ա. գրավոր Բ. անգիր Գ. դաստակ Դ. վաստակ Ե. ֆուտբոլ

2. Ո՞ր տառը նույն ձևով կստանձվի *ող, էղ, որ, ուտ, ուն* բոլոր տառախմբերին և կկազմի նոր բառեր:


Ա. հ Բ. ձ Գ. ք Դ. շ Ե. ց

3. Մեղվիկի փոխարեն պատասխանի ո՞ր տարբերակը կդառնա նկարելուկի ձախակողմյան բառի վերջը և աջակողմյան բառի սկիզբը:

ԳԵՏ () ՈՒՆՔ

Ա. առ Բ. ակ Գ. եզր Դ. ձի Ե. ուլ

4. Ի՞նչ բառ է գրված շրջանի մեջ, եթե կարդաս ժամասլաքի հակառակ ուղղությամբ:



Ա. առատաբուխ Բ. առաջատար Գ. դառնաշիթ Դ. շանթառաք Ե. ճառագայթ

5. Առանց այդ տառի՝ լեռ է, այդ տառով՝ միջատ: Ո՞րն է այդ տառը:

Ա. ա Բ. ք Գ. գ Դ. դ Ե. ե

6. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



Ա. շրջագգեստ Բ. կիսաշրջան Գ. կիսաշրջագգեստ Դ. շրջանագիծ Ե. համագգեստ

7. Եթե բերված շարքի յուրաքանչյուր տառախմբում 3 տառ ջնջես և տառերի տեղերը չփոխես, կստանաս պատասխանի տարբերակ նվագարաններից չորսի անունները: Ո՞ր նվագարանն այս եղանակով ներկայացված չէ տառախմբերով:

ԴՋՈՒՌԴԲՈՒԿ, ԿՋՈՒԹԻԱՌԿ, ԿԻՄԹԱԲՈՒՌ, ՋԹՈՒՄՌՆԱԿ

Ա. թմբուկ Բ. կիթառ Գ. դուդուկ Դ. ջութակ Ե. գուռնա

8. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

արքա, գորգ, եթե, թուղթ, , մոմ

Ա. ընծա Բ. կրակ Գ. ձեռք Դ. խխունջ Ե. նուշ

9. *Խոր գիշեր է Երևանում,
Հորդ անձրև է, քուն չի տանում,
Իսկ կարո՞ղ է ճիշտ մեկ օր անց
Պայծառ արև ընկնել հանկարծ
Երևանի շենքերին թաց:*

Ա. Հնարավոր է:
Բ. Կարող է արև լինել, բայց ոչ շատ պայծառ:
Գ. Գիշերն արև լինել չի կարող:
Դ. Կարող է, եթե երկինքն անամպ լինի:
Ե. Կարող է, եթե լիալուսին չլինի:

10. Մարիամը խանութից ընդամենը քանի՞ **քանոն, սրիչ, ամրակ, նկարակալ** գնեց: Պատասխանը հնարամտորեն թաքնվել է ընդգծված բառաշարքում:

Ա. չորս Բ. ութ Գ. ինը Դ. տասնյոթ Ե. քսան

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ուսուցչուհին գրատախտակին գրել էր *հաստ, աջ, տաք, բարակ, ցածր, սառը, բարձր, ծանր, ձախ* բառերը: Գիտունիկը նույն եղանակով գույգ-գույգ խմբավորեց բառերը: Ո՞ր բառը չգտավ իր գույգին:

Ա. հաստ Բ. սառը Գ. ցածր Դ. ծանր Ե. աջ

12. Ի՞նչ է հնարամտորեն թաքնվել բառաշարքում:

Աստղ (2), մեղու (2), տերև (3), կարկաչ (4), հարևան (4), գիշեր (2), լուսին (1)

Ա. միրգ Բ. ծառ Գ. ծաղիկ Դ. կենդանի Ե. գործիք

13. Ի՞նչ բառ է գաղտնագրվել նկարելուկով:

~~Ձ Վ~~

Ա. վրձին Բ. անձավ Գ. անձրև Դ. անվարձ Ե. ձավար

14. *Այն ի՞նչն է, ի՞նչը,
Մի փոքրիկ թռնիք,
Ոչ դուռ ունի, ոչ ակ,
Մեջը լիքը կրակ:* (Ժողովրդական հանելուկ)

Ա. կարտոֆիլ Բ. սելի Գ. սալոր Դ. եղեգ Ե. նուռ

15. *Ծաւ* և *հույս* բառերն ունեն մի ընդհանուր ծանոթ, որն այդ բառերից մեկի «ընկերն» է և մյուսի գրաշրջումը, այսինքն՝ կազմված է մյուսի բոլոր տառերից: Ո՞ր բառն է ընդհանուր ծանոթը:

Ա. լուսին Բ. կարճ Գ. հյուս Դ. սունկ Ե. վերև

16. *Մլավել, գրավել, ծարավել, պատավել, առավել* բառերից չորսը նույն «ընտանիքից» են: Ո՞ր բառն է «խորթ»:

Ա. մլավել Բ. գրավել Գ. ծարավել Դ. պատավել Ե. առավել

17. Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Պատասխանի տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:

ԱՅԲ
+
ԲԵՆ
ԳԻՐ

<i>Ա.</i>	284	<i>Բ.</i>	192	<i>Գ.</i>	543	<i>Դ.</i>	351	<i>Ե.</i>	528
	+		+		+		+		+
	<u>413</u>		<u>794</u>		<u>326</u>		<u>178</u>		<u>261</u>
	697		986		869		529		789

18. Բառերի տիրուհու ոսկե շղթայի **Օ** տառով օղերը պոկվել և սփռվել էին բերված բառաշարքում: Ընդհանուր քանի՞ օղ էր հայտնվել այս շարքի բոլոր բառերում:

*մեղմ*ր*ր, շ*ր*րալ, բ*լ*րել, *ր*րել, *րըստ*րե, *ր*րոց, քնքշ*ր*ր, *լ*րան, *րեց*ր*

Ա. հինգ *Բ.* վեց *Գ.* յոթ *Դ.* ութ *Ե.* ինը

19. Ո՞ր հատկանիշն է իր ներսում հնարամտորեն թաքցրել *բզեզ, մոծակ, մրջյուն, մեղու, ծղրիղ* միջատներից կազմված խումբը:

Ա. բարակ *Բ.* գորեղ *Գ.* երկար *Դ.* միջակ *Ե.* դժվար

20. Ո՞ր բառն է հետաքրքիր օրինաչափությամբ թաքնվել *դադար, ապակի, կարաս, կարոտ, քորոց* բառաշարքում:


Ա. դարակ *Բ.* դպրոց *Գ.* ցամաք *Դ.* կապոց *Ե.* քերիչ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Խառնագրերից մեկը չի «ուղղվում»: Պատասխանի ո՞ր տարբերակն է «անուղղելին»:

Ա. լագդ *Բ.* կադրու *Գ.* քմտի *Դ.* րիդո *Ե.* քերձ

22. Պատասխանի տարբերակներից ո՞րը կկազմվի, եթե ծաղկի թերթիկներից երկուսը պոկենք:



- Ա. տատիկի տունը
- Բ. տան կատու
- Գ. մատիտով նկար
- Դ. տիկնիկի մատը
- Ե. տան կտուրը

23. *Բենգին, գիմնագիա, դագանակ, ենթակա, զավակ* բառերից չորսը կազմված են որոշակի օրինաչափությամբ: Ո՞ր բառն է խախտել այդ օրինաչափությունը:

- Ա. բենգին
- Բ. գիմնագիա
- Գ. դագանակ
- Դ. ենթակա
- Ե. զավակ

24. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:



- Ա. մի՛ վերացիր
- Բ. մշուշը ցրիր
- Գ. մի վրացի
- Դ. մենակ մնացի
- Ե. մոռացի՛ր

25. Հասմիկը գուշակեց, թե ինչ բառ է գաղտնագրվել նկարելուկով, այնուհետև այդ բառի բոլոր տառերով նոր բառ կազմեց: Ի՞նչ նոր բառ կազմեց Հասմիկը:



- Ա. մկրտել
- Բ. մտրակ
- Գ. կարոտ
- Դ. մկրատ
- Ե. տնկարան

26. Պատասխանի նախադասությունները կազմված են որոշակի օրինաչափությամբ: Ո՞ր տարբերակն է խախտել այդ օրինաչափությունը:

- Ա. Մարդ պիտի պատասխանատու լինի:
- Բ. Զբոսանքը երկար չտևեց:
- Գ. Զգողության ուժը հաշվի չէր առնվել:
- Դ. Ազնվությունը զարդարում էր նրան:
- Ե. Հերթը փոխանցվում է մրցակցին:

27. *Ի՞նչն է՝
Գիշերվա մեջ մի հատիկ է,
Կրկնվում է ցերեկը,
Այն, ինչ չկա այսօր, վաղը,
Պարզվում է, որ երեկ էր:*

Ա. լույսը **Բ.** լուսինը **Գ.** «րե» տառանունը **Դ.** «եչ»-ը **Ե.** ժամը

28. *Երկու ժիր հնձվոր
Քրտինք թափեցին,
Ուղիղ շորս ժամում
Արտը հնձեցին:
Նույն արտը եթե
Չորս հոգով նորից
Նույն օրը հնձեն,
Քանի՞ ժամ է պետք,
Որ գործն ավարտեն:*

Ա. երկու ժամ

Բ. երկուսուկես ժամ

Գ. Կմխանան երկու հնձվորին, միասին կհնձեն:

Դ. Երկու հնձվորը թույլ չեն տա, որ նրանք հնձեն:

Ե. Արտն արդեն հնձած է, չեն կարող նորից հնձել: